ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հոկտեմբերի 2026 թվականի N 2297-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ Արմավիր մարզի Մեծամոր համայնքի Զարթոնք բնակավայրում՝ Բշար Ագիտի Ուսոյանին /ծնված 01.12.1970թ./, Բասե Միրիխանի Ուսոյանին /ծնված 17.05.1977թ./ և Խասե Բշարի Օզմանյանին /ծնված 21.09.1995թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,3242 հա օրինական գյուղատնտեսական հողամասի փաստացի չափը կազմում է 0,3648.66 հա, հողամասին կից ավել զբաղեցված 0,0406.66 հա հողը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական գյուղատնտեսական հողամասին կից՝ ավել զբաղեցված 0,0406,66 հա /կադաստրային ծածկագիր՝ 04-042-0116-0009/ գյուղատնտեսական հողամասն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Բշար Ագիտի Ուսոյանին /ծնված 01.12.1970թ./, Բասե Միրիխանի Ուսոյանին /ծնված 17.05.1977թ./ և Խասե Բշարի Օզմանյանին / ծնված 21.09.1995թ./:

2.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Բշար Ագիտի Ուսոյանին /ծնված 01.12.1970թ./, Բասե Միրիխանի Ուսոյանին /ծնված 17.05.1977թ./ և Խասե Բշարի Օզմանյանին /ծնված 21.09.1995թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բշար Ագիտի Ուսոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 02
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հոկտեմբերի 2026 թվականի N 2296-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N 1179-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 7-ի «Օրինական սեփականաշնորհված հողամասին կից ավել զբաղեցրած հողամասի անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին» N 1179-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 02
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հոկտեմբերի 2026 թվականի N 2295-Ա

ՄԵԼԻՔ ԴԱՎԻԹԻ ՄՍՏՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Մելիք Դավիթի Մստոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արմավիր բնակավայրի 12-րդ փողոց, 43 հասցեում գտնվող՝ Մելիք Դավիթի Մստոյանին /ծնված՝ 15.10.1961թ./ սեփականության իրավունքով պատկանող՝ 04-071-0033-0011 կադաստրային ծածկագրով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում 2020 թվականին ինքնակամ կառուցված 72,5 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝ համաձայն «Արայիկ Մելքոնյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքի ծածկագիր՝ 2026RCRVDD:

2. Բնակելի տուն՝ 72.5 x 0,1028 x 10000 = 74530 /յոթանասունչորս հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ,

1) Վճարման ենթակա գումարը կազմում է 74530 /յոթանասունչորս հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Մեծամորի համայնքապետարանի 900335003407 հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. 2023 թվականին ինքնակամ կառուցված 19,3 քմ արտաքին մակերեսով նկուղը, 2023 թվականին ինքնակամ կառուցված 7,7 քմ արտաքին մակերեսով աստիճանը, 2023 թվականին ինքնակամ կառուցված 40,0 քմ արտաքին մակերեսով բաց պատշգամբը և 2023 թվականին ինքնակամ կառուցված 1,2 քմ մակերեսով աստիճանը համարել որպես ինքնակամ կառուցված շինություններ:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մելիք Դավիրի Մստոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի հոկտեմբերի 02
ք.Մեծամոր